

## Տ. ԱՇՈՏ ԱԲԵՂԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծնվել է 1972 թ. նոյեմբերի 4-ին Գորիսի շրջանի Տաթև գյուղում, ավազանի անունը՝ Գարուն:

1979-1989 թթ. սովորել և ավարտել է տեղի Ս. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը, ավարտաճառի թեման է՝ «Հովհան Որոտնեցու կյանքն ու դավանաբանական հայացքները»:

1995 թ. հոկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1995–1996 թթ. աշխատել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատանը:

1996 թ. հունիսի 2-ին Մայր Աթոռում, ձեռամբ Տ. Ծահե արքեպս. Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: